
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁ ՍԵՈՐ

ԶԱՔԱՐՅԱՆ Շ. Ի.

Ժամանակակից թուրքերենի բայի սեռի կարգում իր ձևաբանական-շարահյուսական դրսևորումներով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում անդրադարձ սեռը:

Անդրադարձ սեռը ցույց է տալիս գործողության ուղղվածություն, վերադարձն այն կրողին՝ սուբյեկտին, գործողության կենտրոնացումը, ինքնամոտիվումը այն իրականացնողի՝ սուբյեկտի մեջ: Անդրադարձ սեռը ցույց է տալիս նաև, որ գործողությունը կատարվում է սուբյեկտի կողմից հենց իր համար՝ իր հետաքրքրությունների շրջանակում: Անդրադարձ բայեր ունեցող նախադասություններում ենթական հիմնականում շնչավոր է լինում:

Անդրադարձ սեռը կազմվում է այն ածանցների օգնությամբ, որոնք նաև կրավորական սեռի ածանցներ են: Դրանք են՝ -n(-in, -ın, -un, -ün) և l(-il, -ıl, -ul, -ül) ածանցները: Անդրադարձ և կրավորական սեռերն ունեն շատ ընդհանրություններ: Այսպես՝ երկուսի դեպքում էլ հենց գործող անձը ենթարկվում է գործողությանը: Սակայն տեղին է նշել, որ անդրադարձ սեռի գործողության ոլորտը զգալիորեն նեղ է, քան կրավորականինը¹: Ժամանակակից թուրքերենում անդրադարձ սեռը չի կարող կրավորական սեռի նման կազմվել ցանկացած բայից: Անդրադարձ սեռը թուրքերենում ունի հետևյալ ձևաբանական դրսևորումները՝

ա) Չայնավոր հնչյունով ավարտվող բայահիմքերից կարելի է կազմել անդրադարձ սեռի բայ՝ բայահիմքին ավելացնելով -n ածանցը: Այսպես՝ yıkamak (լվանալ) – yıkanmak (լվացվել), gizlemek (թաքցրնել) – gizlenmek (թաքնվել), korumak (1. պահպանել, 2. պաշտպանել) – korunmak (1. պահպանվել, 2. պաշտպանվել), süslemek (զարդարել) – süslenmek (զարդարվել):

Անդրադարձ սեռի բայահիմքերը նախադասություններում ունեն հետևյալ դրսևորումները՝ Kızlar süslendiler ve sinemaya gittiler. – Աղջիկները զարդարվեցին և կինո գնացին: Çocuk erken kalktı ve yıkandı. – Երեխան վաղ արթնացավ և լվացվեց:

բ) Բադաձայնով ավարտվող բայահիմքերն անդրադարձ սեռ են կազմում -ı(-in, -un, -ün) և -il(-ıl, -ul, -ül) ածանցների միջոցով: Օրինակ՝ giymek (հագնել) – giyinmek (հագնվել), tutmak (պահել, բռնել) – tutunmak (բռնվել, հենվել), yormak (հոգնեցնել) – yorulmak (հոգնել), üzmek (անհանգստացնել, վշտացնել) – üzülmek (վշտանալ, հուզվել), çekmek (քաշել) – çekilmek (ամաչել, քաշվել):

Dağa çıkarken hepimiz Çok yorulduk. – Լեռը բարձրանալիս բոլորս էլ շատ հոգնեցինք: İki gün süren dev dalgalardan sonra deniz duruldu. – Երկու օր տևող

¹ Любимов К. О двух функциях залоговых аффиксов в турецком языке, М.-Л., 1956.

հսկայական ալիքներից հետո ծովը խաղաղվեց: Adam, düşmemek için pencereye tutundu. – Մարդը չընկնելու համար պատուհանից բռնեց: Gelirken müdüre göründüm. – Գալիս տնօրենի հետ տեսնվեցի:

Անդրադարձ սեռի բայեր կարող են կազմվել նաև *-ış, -iş, -üş, üş*) ածանցով՝ բային հաղորդելով նոր իմաստ՝ olmak (լինել, տեղի ունենալ) – oluşmak (կազմվել, ձևավորվել), kalkmak (վեր կենալ, բարձրանալ) – kalkışmak (ուժերից վեր գործ ձեռնարկել), yetmek (բավարարել) – yetişmek (հասնել, աճել), ermek (հասցնել) – erişmek (հասնել)՝:

Çok çalıştım, ama sonunda isteklerime eriştim. – Շատ աշխատեցի, բայց վերջում ուզածիս հասա: Yaşlı adam oğlunu görünce genc delikanlıya dönüştü. – Տարեց մարդը, որդուն տեսնելուն պես, վերածվեց երիտասարդի:

Երբեմն կրավորական ու անդրադարձ սեռի բայերը միմյանց հետ են շփոթում: Պատճառն այն է, որ շատ բայերի թե՛ կրավորական, թե՛ անդրադարձ սեռերը կազմվում են միևնույն *-ın* և *-il* ածանցներով, որոնք արտահայտում են *և՛* կրավորական, *և՛* անդրադարձ սեռի իմաստ: Կրավորական և անդրադարձ ցուցիչների համընկնման պատճառով որոշ բայեր հանդես են գալիս ինչպես կրավորական, այնպես էլ անդրադարձ սեռի իմաստով, առաջանում է բազմիմաստություն, որը տարբերվում է միայն բուն նախադասության մեջ: Çanta pencereden atıldı. – Պայուսակը նետվել է պատուհանից: Այս նախադասության մեջ *-il* սեռակազմիչ ածանցը հանդես է գալիս կրավորական ածանցի իմաստով: Իսկ «Orhan ileriye atıldı. – Օրհանը առաջ նետվեց» նախադասության մեջ *-il* ածանցը ստորոգյալին հաղորդել է անդրադարձ սեռի իմաստ:

Çocuk yıkandı. Այս նախադասության մեջ եթե երեխան մեկ ուրիշի կողմից է լվացվում, ապա yikanmak բայն այս դեպքում հանդես է գալիս կրավորական սեռի իմաստով: Իսկ եթե երեխան ինքն իրեն է լվացվում, Çocuk yıkandı, ապա yikanmak-ը անդրադարձ սեռի իմաստ է հաղորդում բային:

Այսպիսով, *-n* ածանցներով կազմվող բայերը կարող են լինել *և՛* կրավորական, *և՛* անդրադարձ սեռի բայեր: Դրանք տարբերելու համար անհրաժեշտ է հասկանալ նախադասության բուն իմաստը:

Ağaç kesildi. – Ծառը կտրվեց: Այս նախադասության մեջ բայը կրավորական սեռով է արտահայտված: Քանի որ ծառը կտրվեց ինչ-որ մեկի կողմից, իսկ «Yağmur kesildi. – Անձրևը կտրվեց» նախադասության մեջ բայն անդրադարձ սեռի իմաստ ունի, քանի որ անդրադարձ բայերով կազմված նախադասություններում ենթակայի կատարած գործողությունը վերադառնում է ենթակային և ազդում է նրա վրա, այնինչ կրավորական բայով նախադասություններում ենթական իր վրա է կրում ուրիշի կատարած գործողությունը:

² Щека Ю. В. Практическая грамматика турецкого языка. Восток – Запад, М., 2007.

Թուրքագետ-լեզվաբան Ա. Կոնոնովն անդրադարձ սեռի բայերն առանձնացնում է հետևյալ հիմնական խմբերով՝ անձնական-անդրադարձ, ընդհանուր-անդրադարձ և անուղղակի-անդրադարձ սեռի բայեր³:

1. Անձնական-անդրադարձ իմաստով բայերն արտահայտում են գործողություն, որը ծագում է սուբյեկտից և վերադառնում նրան, այսինքն՝ գործողություն իրականացնողն այս դեպքում հանդիսանում է գործողության ուղղակի օբյեկտ, և այդ պատճառով այս խմբի բայերի համար հիմքը անցողական բայերն են: Այսպես՝ *giymek* (հագնել) – *giyinmek* (հագնվել), *soymak* (մերկացնել) – *soyunmak* (հանվել, մերկանալ), *taramak* (սանրել) – *taranmak* (սանրվել):

2. Անձնական-անդրադարձ նշանակության առանձին բայեր ձևավորվում են յուրահատուկ բառիմաստային եղանակով՝ *olmak* բայի միջոցով, օրինակ՝ *tıraş etmek* (սափրել) – *tıraş olmak* (սափրվել), որտեղ գործողությունն իրականացվում է սուբյեկտի կողմից և վերադառնում է նրան: Այս բայը կրավորական սեռում ստանում է *tıraş edilmek* (սափրված լինել) ձևը, որտեղ գործողությունն իրականանում է քերականական օբյեկտով, սուբյեկտը ենթարկվում է գործողությանը: Նշենք նաև, որ թուրքերենի պատճառական սեռն էլ կազմվում է հետևյալ կերպ՝ *tıraş ettirmek* (սափրել տալ), որի դեպքում գործողությունը կատարվում է սուբյեկտի կողմից, այդ սուբյեկտն էլ իր հերթին հանդիսանում է մեկ այլ սուբյեկտի օբյեկտ:

3. Ընդհանուր-անդրադարձ իմաստով բայերն արտահայտում են գործողություն՝ հենց իրականացնողի կողմից: Այս բայերը կարող են կազմվել նաև կրավորական -il ածանցի և -(a) l բառակազմական ածանցի օգնությամբ (*çoğalmak* – շատանալ (*çok* – շատ), *kısmak* – կարճանալ (*kısa* – կարճ):

Ընդհանուր-անդրադարձ իմաստով բայերը ցույց են տալիս՝

ա) սուբյեկտի ներքին, հոգևոր զգացումները, ապրումները՝ *sevinmek* (ուրախանալ, հրճվել), *eğlenmek* (ուրախանալ, զվարճանալ),

բ) արտաքին, ֆիզիկական և այլ փոփոխություններ սուբյեկտի վիճակի, դրության, շարժումների վերաբերյալ՝ *saklanmak* (թաքնվել), *görünmek* (տեսնվել, երևալ):

Օրինակ՝ *Etrafına bakındı*. – Շուրջը նայեց:

Son günlerde oraya gitmekten çekmiyordum. – Վերջին օրերին խուսափում էի գնալ այնտեղ:

Nermin kapıda göründü. – Ներմինը երևաց դռան արանքում:

Առանձին բայեր՝ հաճախ անանցողական, -(ı)n ածանցով ևս պահպանում են իրենց անանցողական նշանակությունը՝ ձեռք բերելով դանդաղության, գործողությունը հանդարտ կատարելու նրբերանգներ: Օրինակ՝ *uzamak* (ձգվել) – *uzanmak* (դանդաղորեն երկարել, ձգվել), *kalkmak* (վեր կենալ) – *kalkınmak* (բարձրանալ), *gezmek* (գրոսնել) – *gezinmek* (հանդարտ գրոսնել, ման գալ, ճեմել):

³ Кононов А. Н. Грамматика современного турецкого литературного языка, М.-Л., 1956, с. 194.

Որոշ անցողական բայեր, իրենց բառային իմաստից կախված, ընդհանուր-անդրադարձ նշանակություն են ստանում շարահյուսական եղանակով՝ *kendi* անդրադարձ դերանվան օգնությամբ, որը դրվում է համապատասխան դեմքով և հիմնականում հայցական հոլովով (երբեմն դրվում է նաև տրական հոլովով)⁴: *Kendi* դերանվան հետ օգտագործվում է հիմնական սեռի բայ: Մակայն այս կանոնը ոչ բոլոր բայերին է վերաբերում: Օրինակ՝ *orunmak* – պաշտպանել, *korunmak*, *kendim korunmak* – պաշտպանվել *övmek* – գովել, *övmek*, *kendini övmek* – հպարտանալ, պարծենալ, գլուխ գովել, *kendisini pencereden attı*. – Իրեն դուրս նետեց պատուհանից: *Gördün mü*, *kendini üşüttün dedim?* – Տեսնո՞ւմ ես, քեզ մրսեցրե՞լ ես, – ասացի:

Որոշ դեպքերում, բայի բառային իմաստից կախված, ընդհանուր-անդրադարձ նշանակությունը կարող է արտահայտվել միայն շարահյուսական եղանակով՝ *kendi* անդրադարձ դերանվան կրկնությամբ: Երբեմն այդ կրկնվող *kendi*-ների հետ օգտագործվում են անդրադարձ բայեր: Օրինակ՝ *söylemek* – խոսել, *söylenmek*, *kendi kendine söylemek*, *kendi kendine söylenmek* – խոսել ինքն իրեն, *tenkit etmek* – քննադատել, *kendi kendini tenkit etmek* – ինքն իրեն քննադատել, *öldürmek* – սպանել, *kendini öldürmek*, *kendi kendini öldürmek* – ինքն իրեն սպանել, *ihmal etmek* – խնդիր անտեսել:

Այսպիսով, կախված բայի բառային իմաստից՝ ընդհանուր-անդրադարձ նշանակությունը կարող է հաղորդվել բային երկու միջոցով՝ ձևաբանորեն -n, -l, -ş ածանցների օգնությամբ և շարահյուսորեն՝ *kendi* անդրադարձ դերանվան օգնությամբ: Պետք է նշել, սակայն, որ այդ երկու միջոցների մեջ կա իմաստաբանական նուրբ տարբերություն: Օրինակ՝ *kendinizi* *övmeyiniz* (մի՛ գովեք ձեզ) = *övmeyiniz* (մի՛ պարծեցեք, գլուխ մի՛ գովեք), *kendini iyi korumalısın* (դուք պետք է ձեզ լավ պահպանեք) = *iyi korunmalısın* (պետք է լավ պահպանվեք):

Բայական ձևերի բարդ տարբերությունն ընդհանրապես, և սեռային տարբերությունը մասնավորապես հանգեցնում է նրան, որ ելակետային ձևը, այսինքն՝ բայը հիմնական (ուղիղ) սեռում կամ արդեն օգտագործելի չէ, կամ էլ չի ձևավորվել: Այսինքն՝ անդրադարձ սեռից հարկավոր է տարբերել այն բայերը, որոնցում -n, -lan ածանցները բառակազմական են, այլ ոչ թե բայասեռի ցուցիչները: Նման բայերից են՝ *utanmak* (ամաչել), *uyanmak* (արթնանալ), *tırmanmak* (մագլցել), *kuşanmak* (շրջապատվել), *öğrenmek* (սովորել), *ıslanmak* (թրջվել), *güzellenmek* (զեղեցկանալ), *yaşlanmak* (ծերանալ), *akıllanmak* (խելոքանալ) և այլն⁵:

Հիմնական սեռում համապատասխան ձև չունեցող բայերի թվում են նաև մի շարք բայեր, որոնք կազմվում -la+n/-le+n ածանցով: Փաստորեն, այս բայերը չունեն նախնական ոչ անդրադարձ ձև: Այդ պատճառով դրանք մտնում են թուրքերենի սեռային համակարգի մեջ այնքանով, որ դրանք ստանում են հետագա ձևաբանական զարգացում պատճառական և

⁴ Hengirmen M. Türkçe Dilbilgisi, Yabancılar için, Ankara, 1999.

⁵ Кононов А. Н., նշվ. աշխ., էջ 196:

կրավորական սեռային ածանց-ների միավորման ուղիով⁶: Այսպիսով, -lan-len-ը բառակազմական ածանց է. դրա օգնությամբ անուններից կազմվում են սկզբնա- ձևային բայեր՝ անդրադարձ նշանակությամբ: -Lan-len ածանցով կազմված բայերը անցողական բայեր են:

-Lan-len ածանցը միանում է.

ա) վերացական գոյականներին և ածականներին, որոնցից կազմված բայերը ցույց են տալիս ներքին ապրումներ, բարոյական և ֆիզիկական վիճակ, ինչպես նաև ներքին հատկանիշների և որակների առաջացում ու զարգացում: Օրինակ՝ *endişe* – անհանգստություն, *endişelenmek* – անհանգստանալ, *ümit* – հույս, *ümitlenmek* – հուսալ, *hoş* – հաճելի, *hoşlanmak* – դուր գալ, *hasta* – հիվանդ, *hastalanmak* – հիվանդանալ, *akıl* – խելք, *akıllanmak* – խելքի գալ, *խելոքանալ*:

բ) կոնկրետ նշանակությամբ գոյականներին և ածականներին, որոնցից կազմված բայերը ցույց են տալիս շարժում և արտաքին հատկանիշների առաջացում: Օրինակ՝ *silâh* – զենք, *silâhlanmak* – զինվել, *çiçek* – ծաղիկ, *çiçeklenmek* – ծաղկել, *yeşil* – կանաչ, *yeşillenmek* – կանաչել:

Ինչպես գիտենք, -la ածանցը, որպես կանոն, ձևավորում է անցողական բայեր, և այդ պատճառով բնական է, որ շատ հաճախ հանդիպում են այսպիսի գոյգեր՝ *temizlemek* – մաքրել, *temizlenmek* – մաքրվել, *մաքուր լինել* և այլն:

-Lan-len ածանցով կազմված բայերը երբեմն կրկնում են.

ա) բայերի, որոնք ձևավորվել են -laş -leş ածանցով, օրինակ՝

kuvvetlenmek = *kuvvetleşmek* – ուժեղանալ (*kuvvet* – ուժ)

yenilenmek = *yenileşmek* – նորանալ (*yeni* – նոր)

güzellenmek = *güzelleşmek* – գեղեցկանալ (*güzel* – գեղեցիկ)

topallanmak = *topallaşmak* – կաղալ, կաղ դառնալ (*topal* – կաղ)

բ) բայերի, որոնք ձևավորվում են *olmak* բայի օգնությամբ: Այս բայերը ցույց են տալիս վիճակ, դրություն և ունեն անանցողական նշանակություն, օրինակ՝ *hastalanmak* = *hasta olmak* – հիվանդանալ, *hիվանդ լինել* *sakatlanmak* = *sakat olmak* – հաշմվել, *հաշմանդամ լինել* *topallanmak* = *topal olmak* – կաղալ:

- Lan-len ածանցով կազմվող մի քանի բայեր ունեն անցողական նշանակություն, օրինակ՝ *kullanmak* – օգտագործել, *kabullenmek* – յուրացնել և այլն:

Öğrenmek բայը, որպես բացառություն, ունի հիմնական և ընդհանուր-անդրադարձ սեռերի իմաստ, այսինքն՝ և՛ անցողական, և՛ անանցողական նշանակություն, օրինակ՝ *çocuk dersini iyi öğrenir* (անցողական բայ) – Երեխան դասը լավ է սովորում: *Cocuk iyi öğrenir*, (անանցողական բայ) – Երեխան լավ է սովորում:

Düşünmek բայը, չնայած հիմքում - m ածանցի ակնհայտ առկայությանը, ունի միայն անցողական նշանակություն՝ մտածել, և պահանջում է հայցական հոլովով դրված ուղիղ խնդիր, օրինակ՝

Hep sizi düşündüm. – Ձեր մասին ամեն ինչ մտածեցի:

⁶ Айляров Ш. С. Учебник турецкого языка, М., 1954.

Ընդհանուր-անդրադարձ նշանակությամբ բայեր կարող են կազմվել նաև -m և -il ածանցներով, որոնք միանում են մի շարք անվանական հիմքերի: Այս բայերը ևս չունեն ոչ անդրադարձ իմաստով ելակետային ձև⁷: Օրինակ՝ kısı – կարճ, kısalmak – կարճանալ, diri – կենդանի, dirilmek – կենդանանալ, doğru – ուղիղ, doğrulmek – ուղղվել:

3. Անուղղակի-անդրադարձ նշանակության բայերը ցույց են տալիս մի գործողություն, որը կատարվում է սուբյեկտի կողմից՝ իր հետաքրքրությունների շրջանակում, իր համար: Նշենք, որ նման բայերը պահպանում են անցողականությունը և պահանջում են ուղիղ խնդիր: Այսպիսով, -(1)ո ածանցը նման դեպքերում ունի ավելի շատ իմաստաբանական, քան շարահյուսական նշանակություն, օրինակ՝ Ben de seni evlât edindim. – Ես էլ քեզ որդեգրեցի:

Բայի անուղղակի անդրադարձ իմաստը կարող է ուժեղանալ տրական հոլովով դրված – kendi անդրադարձ դերանվան օգտագործման դեպքում, օրինակ՝ Kadın bir elbise dikinmiş. = Kadın kendine bir elbise dikmiş. – Կինն իր համար զգեստ կարեց:

Հարկ է նշել, որ անդրադարձ սեռի բայերը նոր իմաստներ ձեռք բերելու հետևանքով անջատվում են անցողական բայերից, և սեռային հարաբերությունները դրանց միջև խախտվում են⁸: Օրինակ՝ almak – վերցնել, alınmak – նեղանալ sevmek – սիրել, sevinmek – ուրախանալ, sürmek – քշել, wpsunrել, sürünmek – թրև գալ, yırtmak – պատռել, yırtınmak – գոռալ:

Ավելացնենք, որ -k- ածանցով ևս անուններից կարելի է կազմել անդրադարձ իմաստ ունեցող բայեր⁹, օրինակ՝ gözükmek – երևալ, acıkmak –

⁷ Նույն տեղում, էջ 364:

⁸ Նույն տեղում, էջ 365:

⁹ Koç N. Yeni Dilbilgisi, İstanbul, 1996, s. 336.

սովածանալ, birikmek – հավաքվել, կուտակվել, gecikmek – ուշանալ:

Այսպիսով, ընդհանրացնելով մեր կատարած վերլուծությունը, նշենք, որ ժամանակակից թուրքերենի անդրադարձ սեռը, թեև կազմվում է նույն կրավորական սեռի ածանցներով՝ -n (-in, -ın, -un, -ün) և l(-il, -ıl, -ul, -ül), և ունի որոշակի ընդհանրություններ կրավորական սեռի հետ, այդուհանդերձ, անդրադարձ սեռի գործողության ոլորտը զգալիորեն ավելի նեղ է, քան կրավորականինը: Անդրադարձ սեռը չի կարող կրավորական սեռի նման կազմվել ցանկացած բայից: Կախված բայի բառային իմաստից՝ ընդհանուր-անդրադարձ նշանակությունը կարող է բային հաղորդվել երկու միջոցով՝ ձևաբանորեն -n, -l, -ş ածանցների օգնությամբ և շարահյուսորեն՝ kendi անդրադարձ դերանվան օգնությամբ: Բացի այդ՝ անդրադարձ սեռը հնարավորություն է տալիս գոյական անուններից ևս կազմելու նոր բայեր:

ВОЗВРАТНЫЙ РОД СОВРЕМЕННОГО ТУРЕЦКОГО ЯЗЫКА

ЗАКАРЯН Ш. И.

Резюме

В современном турецком языке возвратный род показывает направленность действия, его обращенность к субъекту действия и сосредоточенность в субъекте. Помимо этого возвратный род показывает действие, выполняемое субъектом в рамках его интересов. В предложениях, имеющих возвратный глагол, подлежащее в основном выражается одушевленным существительным. Хотя возвратный род современного турецкого языка образуется при помощи приставок пассивного рода – n(-in, -ın, -un, ün) и l(-il, -ıl, -ul, ü) и имеет некоторое сходство с пассивным родом, все же сфера употребления возвратного рода значительно уже, нежели у пассивного рода. В возвратном роде, в отличие от пассивного, употребляются не все глаголы. В зависимости от смысла глагола общее возвратное значение передается глаголу двумя способами – морфологически – посредством приставок -n, -l, -ş и синтаксически – с помощью возвратного местоимения kendi. Возвратный род дает также возможность из имен существительных составлять новые глаголы.